ՄԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԵՎ ՀՈՒԶԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ: ՌԵՖԼԵՔՍԻԱՆ ՈՐՊԵՍ ԴԵՌԱՀԱՍԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԻՆՏԵԳՐՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Անհատի հոգեկան զարգացման տարիքային տարբեր փուլերում, նրա անձի ձևավորման գործում ինտելեկտուալ և հուզական զարգացումների փոխահարաբերության հարցը հանդիսանում է տարիքային հոգեբանության հետազոտության առանցքային խնդիրներից մեկը: Այս հարցը առանձնակի սրությամբ է հառնում հատկապես դեռահասության տարիքի անձի ձևավորման, նրա հոգեկան զարգացման դինամիկայի ու պատճառականության հետազոտության ժամանակ, քանզի դեռահասության հոգեբանությունը մեկնաբանող տարբեր տեսություններ առանձին դեպքում ներկայացնելով դեռահասի հոգեբանության պատճառականության խիստ տարամետ մեկնաբանություններ, գործնականում լիովին հիմնավորում են իրենց լինելիությունը:

Այսպես օր. առավել ֆունդամենտալ հոգեվերլուծական մոտեցման կողմնակիցները դեռահասության տարիքին բնորոշ հոգեբանական դրսևորումները բացատրում են դեռահասի հուզական կյանքի առանձնահատկություններով մասնավորապես անհատի համար հուզականորեն նշանակալի առաջնային օբյեկտների հետ կապվածությունների վերապրման, մանկական տարիքին բնորոշ հոգեսեռական կոնֆլիկտների ռեակտիվացիայի և վերջնական հանգուցալուծման գործընթացներով, ինչի արդյունքում անհատը ձեռք է բերում հասուն հոգեսեռական նույնականություն (4,7,9,11,12), ամերիկյան դպրոցը, է. Էրիկսոնը, Ռ. Բերնսը և ուրիշներ (1,4,5,7,12,13) դեռահասության տարիքի հոգեբանության համար վճռորոշ են համարում սոցիալական փոխազդեցությունները, ես նույնականության ձևավորումը և այլն, Լ. Ս. Վիգոտսկին, Ժ. Պիաժեն և նրանց հետևորդները (2,3,6,7,8,) դեռահասի անձի ձևավորման անկյունաքարում են դնում ինտելեկտուալ զարգացման առանձնահատկությունները: Խոսելով դեռահասության տարիքում անձի ձևավորման պատճառականության մասին իր տեսության շրջանակում Լ. Ս. Վիգոտսկին հետևողականորեն զարգացնում է այն գաղափարը, որ բոլոր տեղաշարժերը դեռահասի հոգեկան զարգացման գործընթացում և ինչպես նաև նրա անձի և աշխարհայացքի ձևավորումը անմիջականորեն պայմանավորված են այդ տարիքում հասկացությունների կազմավորման գործառույթի առաջացմամբ և անցումով տեսական տրամաբանական մտածողությանը, որը գործառնում է գերազանցապես հասկացությունների միջոցով (3):

Այս եզրակացությանը նա հանգում է վերլուծելով հոգեկան երեք տիպի խանգարումների՝ հիստերիայի, աֆազիայի և շիզոֆրենիայի հոգեբանական ասպեկտները: Խոսելով հիստերիայի ախտանիշների մասին Լ. Ս. Վիգոտսկին պնդում է, որ հիստերիկների մոտ թերզարգացած է հասկացությունների կազմավորման գործառույթը, որը անմիջականորեն պայմանավորում է իրենով հիպոբուլիկան, որը առկա է հոգեկանում նպատակային կամքի փոխարեն: Հիստերիայի դեպքում, ըստ նրա, խաթարվում է մտածողության նպատակային ապարատը և փոխվում է մտածողության և աֆֆեկտիվ կյանքի միջև նորմալ մարդուն բնորոշ հարաբերակցությունը: Հիստերիկի մտածողությունը, ըստ Լ. Ս. Վիգոտսկու, կորցնում է իր կամային բնույթը, հիստերիկը չի կարողանում ղեկավարել այն, ինչպես և իր ողջ վարքը (3): Մենք բնականաբար չենք կարող չհամաձայնել Լ. Ս. Վիգոտսկու կողմից ներկայացվող այս տեսակետին, քանզի նա բավական համակողմանիորեն և հիմնավորապես ապացուցում է այն: Մյուս կողմից, չենք կարող նաև անտեսել հիստերիայի հոգեվերլուծական կրկին բավական ընդունված է և գործնականում բավականաչափ ապացուցված մեկնաբանությունը, որը հիստերիայի ախտանիշների պատճառականության մեջ շեշտադրում է գիտակցական անգիտակցական փոխհարաբերությունը և այդ գործընթացն ուղեկցող հուզականությունը (9,11):

Հոգեվերլուծական մեկնաբանության համաձայն վերոհիշյալ ախտանիշների առկայությունը մարդու վարքում հետևանքն է անհաջող արտամղման, որի դեպքում շարժողական ոլորտը չի ենթարկվում մարդու գիտակցական կամային կարգավորմանը միայն այն պատճառով, որ շարժողական բաղադրիչին ուղեկցող հոգեկան բովանդակությունը այս կամ այն պատճառով արտամղված է գիտակցությունից, հետևաբար դուրս կամային կարգավորման ոլորտից: Այս մոտեցման համաձայն հիստերիայի ախտանիշը չհաջողված մի կոմպրոմիս Գեր Ես-ի[1] (11) և բնազդային մղումների միջև կոնֆլիկտում: Գեր Ես-ը համաձայն հոգեվերլուծական մեկնաբանության ձևավորվում է վաղ մանկական տարիքում ծնողների կողմից երեխային ներկայացվող հասարակական արգելքների ներքնայանացման գործընթացում, որտեղ առաջատար և վճռորոշ նշանակություն ունեն աֆֆեկտիվ կյանքի դինամիկան ու ձևավորվող հուզականությունը (4,9,11): Փորձը համադրել վերոնշյալ երկու տեսակետները ծնում է նոր հարց. ինչն է առավելապես պայմանավորում գիտակցական-անգիտակցական փոխհարաբերության նշված յուրահատկությունները հիստերիայի պարագայում: Եթե հետևենք Լ. Ս. Վիգոտսկու տրամաբանությանը, ապա խնդիրը հասկացական մտածողության թերգործառնության մեջ է, որը անհնար

---

[1] Զ. Ֆրոյդի կողմից առաջարկված անձի կառուցվածքային տոպոգրաֆիկ երկրորդ մոդելի շրջանակում նկարագրված հոգեկան ինստանցիա, որը ձևավորվում է վաղ մանկական տարիքում հասարակական արգելքների ներքնայնացման գործընթացում (11):

է դարձնում նպատակային կամքի լիարժեք գործառնությանը, հետևելով հոգեվերլուծական տեսության պիտի մտածենք, որ դիսֆունկցիայի պատճառը աֆֆեկտիվ գործընթացներն են, որ խոչընդոտում են հոգեկան բովանդակությունների մոտքը գիտակցության դաշտ և հետևաբար անհասանելի դարձնում հոգեշարժողական կոմպլեքսի լիարժեք ինքնագիտակցումը և արդյունքում ինքնակարգավորումը: Այսպիսով արդյոք ինտելեկտուալ ոլորտը այդչափ վճռորոշ են անձի նրա ինքնության ձևավորման համար, ինչպես պնդում է Լ. Ս. վիգոտսկին, թե համալիր սոցիալական ներգործությունը, որ կրում է մարդը և որը հավասարապես ներառում է թե ինտելեկտուալ և թե հուզական ոլորտները, բայց բոլոր դեպքում առաջին հերթին հուզականը, քանզի վերջինս, ինչպես համարում են հոգեվերլուծական դպրոցի կողմնակիցները, գերիշխող է ողջ մանկական տարիքի ընթացքում և ենթադրվում է պիտի շարունակի մնալ այդպիսին նաև դեռահասության տարիքում:

Որոնք են այն մեխանիզմները, որոնց գործառնության շնորհիվ դեռահասության տարիքում հասկացական տրամաբանական մտածողությունը սկսում է պայմանավորել այնպիսի բարձրագույն սինթեզների առաջացումը ինչպիսիք են ասնձն ու նրա աշխարհայացքը:

Խոսելով դեռահասության տարիքում հոգեկան ընդհանուր զարգացման մեջ ինտելեկտուալի և հուզականի փոխհարաբերության մասին Լ. Ս. Վիգոտսկին չի կիսում իր ժամանակաշրջանի հոգեբանության մեջ ավանդաբար ընդունված տեսակետը, համաձայն որի դեռահասության տարիքի ճգնաժամի կենտրոնական միջուկն ու գլխավոր բովանդակությունն է կազմում հուզական այն փոփոխությունները, որոնք բնորոշում են անհատի հոգեկան կյանքը սեռական հասունացման շրջանում: Նա համարում է, որ այս տարիքում հոգեկան զարգացման հուզական ասպեկտը առաջին պլան է մղվում միայն այն պատճառով, որ հասկացությունների կազմավորման գործառույթը իրենից ներկայացնում է չափազանց բարդ գործընթաց և այդ տեսակետից դժվար արտաքին դիտարկման և ուսումնասիրության համար: Լ. Ս. Վիգոտսկին կարծում է, որ նման հարցադրման պարագայում այն փաստը, որ սեռական հասունացման շրջանը հանդիսանում է ինտելեկտուալ զարգացման բուռն վերելքի շրջան և այն որ այդ շրջանում մտածողությունը առաջին անգամ մղվում է առաջին պլան ոչ միայն մնում է աննկատ, այլ նույնիսկ վերածվում է լրիվ հանելուկային և անբացատրելի մի երևույթի (3): Մեկ այլ հետազոտող Ս. Լ. Ռուբինշտեյնը իր հերթին կարևորելով այն միտքը, հոգեկանի իսկական միավորը սուբյեկտի կողմից օբյեկտի արտացոլման ամբողջական ակտն է, որը միշտ այս կամ այն չափով ներառում է երկու հակադիր բաղադրիչների՝ գիտելիքի և վերաբերմունքի, ինտելեկտուալի և աֆֆեկտիվի միասնություն, որոնցից մեկը կամ մյուսը ժամանակ առ ժամանակ հանդես է գալիս գերիշխող դերում նշում է, որ անհատի օնտոգենետիկ զարգացման վաղ մանկական շրջանում

ինքնաարտացոլման ակտում աֆֆեկտիվ գործընթացները գերիշխում են ինտելեկտուալ գործընթացների նկատմամբ (10): Ինչից ելնելով կարելի է ենթադրել, որ դեռահասության տարիքում հնարավոր է այս հարաբերակցության փոփոխություն, այն ինչի մասին, ըստ էության, խոսում է Լ. Ս. Վիգոտսկին:

Խնդրի էությունն է գտնել այն միավորող օղակը, այն մեխանիզմը, որը համատեղում է սոցիալական ներգործությունների պարագայում հուզականն ու ինտելեկտուալը վերածելով դրանք անձի տիրապետությանը հասու բովանդակությունների, ինչի արդյունքում վերջինս ձեռք է բերում սեփական ակտիվությունը գիտակցորեն կարգավորելու ընդունակության:

Այս հարցի պատասխանը ստանալու, ինչպես նաև հասկանալու համար ինչ մեխանիզմների գործառնության շնորհիվ է, որ դեռահասության տարիքում հասկացական տրամաբանական մտածողությունը պայմանավորում այնպիսի բարձրագույն սինթեզների առաջացումը ինչպիսիք են անձն ու նրա աշխարհայացքը, դիտարկենք այն փոփոխությունները, որ տեղի են ունենում մտածողության բովանդակության և դրա ձևերի մեջ՝ պայմանավորված հասկացությունների կազմավորման գործառույթի ձևավորմամբ: Լ. Ս. Վիգոտսկին համարում է, որ հասկացությունների կազմավորման գործառույթի ձևավորմամբ անմիջականորեն պայմանավորված մտածողության ձևերում սկսում է գերիշխել տրամաբանական մտածողությունը, ինչը և հնարավոր են դարձնում խորքային փոփոխությունները մտածողության բովանդակության մեջ, վճռորոշ դառնալով անձի ու նրա աշխարհայացքի ձևավորման համար (3):

Սկնհայտելու համար մտածողության տրամաբանականության հիմքում ընկած հոգեբանական մեխանիզմներ Լ. Ս. Վիգոտսկին մեջբերում է Ժ. Պիաժեի ուսումնասիրությունները, համաձայն որի, տրամաբանական մտածողության ամենաէական հատկանիշը սեփական մտավոր գործառնությունների գիտակցումն ու կառավարումն է, այսինքն ռեֆլեքսիան: Ըստ Ժ. Պիաժեի տրամաբանական մտածողությունը մարդու կողմից ինքն իրեն որպես մտածող էակի կառավարման փորձ է՝ ջանք գիտակցելու սեփական մտավոր օպերացիաները, այլ ոչ միայն դրանց արդյունքը, պարզելու համար արդյոք դրանք համաձայնեցված են միմյանց, թե հակասում են իրար (3,6,8,):

Երեխային մտածողության մեջ տրամաբանականության, հետևաբար նաև ռեֆլեքսիայի բացակայությունը Ժ. Պիաժեն բացատրում է մանկան հոգեկան կյանքում գերիշխող էգոցենտրիզմի առկայությամբ, որ սեփական սուբյեկտիվության գիտակցման, իրերի օբյեկտիվ չափորոշիչի բացակայության, առարկաների, այլ մարդկանց և ինքն իրեն ճանաչման նախաքննադատական և հետևաբար նախաօբյեկտային դիրքավորման որոշակի միասնություն է, ինտելլեկտուալ և սոցիալական մի դիրք, երբ անհատը դիտարկում է ամբողջ աշխարհը իր սեփական տեսակետից, որը նա չի գիտակցում(6,7,8,):

Ժ. Պիաժեն առանձակի ընդգծում է այն հանգամանք, որ իմացության սկզբանական էգոցենտրիզմը ոչ մի դեպքում Ես-ի գերտրոֆիկ գիտակցումը չէ, այլ ընդհակառակը, օբյեկտների նկատմամբ անմիջական վերաբերմունքն է, երբ սուբյեկտը, անտեսելով Ես-ը, չի կարողանում դուրս գալ Ես-ից, որպեսզի գտնի իր տեղը սուբյեկտիվ կապերից ազատագրված հարաբերությունների աշխարհում: Այն իմացության ակտում սուբյեկտի և օբյեկտի միախառնում է, որը ենթադրում է աշխարհի իմացության հարաբերականության հասկացման և տեսակետների կոորդինացիայի բացակայություն, սեփական Ես-ի որակները և սեփական հեռանկարները այլ մարդկանց անգիտակցաբար վերագրելու մի դիրքորոշում, երբ մարդը չի գիտակցում սեփական տեսակետի սուբյեկտիվությունը (6,7,8): Զարգացման ընթացքում, ըստ Ժ. Պիաժեի տեղի ունենում մտավոր դիրքի փոփոխություն, էգոցենտրիզմը աստիճանաբար իր տեղն է զիջում դեցենտրացիային, առավել կատարյալ մտավոր դիրքի: Էգոցենտրիզմից դեպի դեցենտրացիա մտավոր դիրքի փոփոխությանը, ըստ Ժ. Պիաժեի կարող է հանգեցնել միայն մանկակուսն մտքի որակական զարգացումը, այսինքն՝ սեփական Ես-ի պրոգրեսիվ զարգացող գիտակցումը: Ըստ Ժ. Պիաժեի մանկական մտքի ռեալիզմից դեպի օբյեկտիվություն աստիճանական զարգացման հիմնական պայմանը, ամենօրյա մտքում Ես-ի անհամար ներխուժումների լիարժեք գիտակցումն է, մեծ քանակությամբ պատրանքների գիտակցումը, որոնք առաջանում են այդ ներխուժման արդյունքում (6,7,8,):

Այս տեսակետից էգոցենտրիզմի նվազումը Ժ. Պիաժեն բացատրում է ոչ թե գիտելիքի ավելացմամբ, այլ ելակետային դիրքի փոփոխությամբ, երբ սուբյեկտը համադրում է իր ելակետային տեսակետը հնարավոր այլ տեսակետների հետ: Ազատագրվել էգոցենտրիզմից նշանակում է ապակենտրոնանալ, իրականացնել դեցենտրացիա, այլ ոչ միայն նոր գիտելիքներ ձեռք բերել առարկաների և սոցիալական խմբի մասին: Դա նշանակում է գիտակցել այն, ինչը ընկալվել է սուբյեկտիվորեն, գտնել իր տեղը հնարավոր տեսակետների մեջ, հաստատել ընդհանուր և փոխադարձ հարաբերությունների համակարգ առարկաների, այլ անձանց և սեփական Ես-ի միջև (6,7,8,):

Էգոտենտրիզմը հաղթահարելու գործում Ժ. Պիաժեն կարևորում է երկու պայման. առաջին՝ գիտակցել սեփական Ես-ը որպես սուբյեկտ և տարանջատել սուբյեկտը օբյեկտից, երկրորդ՝ կոորդինացնել սեփական տեսակետը ուրիշների հետ, այլ ոչ դիտարկել այն որպես միակ հնարավոր:

Էգոցենտրիզմից դեպի դեցենտրացիա անցման գործում Ժ. Պիաժեն մեծապես կարևորում է սոցիալական փոխազդեցությունների նշանակությունը, նշելով, որ իր մասին գիտելիքը երեխայի մոտ առաջանում է սոցիալական փոխազդեցության արդյունքում: Առանձնացնելով փոխազդեցության երկու ծայրահեղ տիպեր՝ հարկադրանք և համագործակցություն՝ նա պնդում է, որ սոցիալական հարաբերությունները երեխայի և մեծահասակի միջև, որոնք

հիմնված են հարկադրանքի վրա չեն նպաստում երեխայի կողմից սեփական սուբյեկտության գիտակցմանը

Սեփական Ես-ը գիտակցելու համար, ըստ Ժ. Պիաժեի անհրաժեշտ է ազատագրվել հարկադրանքից, անհրաժեշտ է կարծիքների փոխներգործություն: Այդպիսի հարաբերությունները առաջանում են այն պահից սկսած, երբ սոցիալական փոխազդեցության կողմերի միջև հաստատվում է համագործակցություն՝ փոխադարձ զարգացնող վերահսկողություն(6,7,8,):

Այսպիսով Լ.Ս. Վիգոտսկու, ապա նաև Ժ. Պիաժեի տեսակետների հաջորդական դիտարկման արդյունքում պարզ է դառնում, որ տեսական մտածողությունը, որը, ըստ Լ.Ս. Վիգոտսկու, այդչափ վճռորոշ է դեռահասի անձի ու նրա աշխարհայացքի ձևավորման համար, հիմնվում է մտածողության տրամաբանական ձևերի վրա, որն էլ, ըստ Ժ. Պիաժեի, տեղի ունի միայն սեփական Ես-ի, սուբյեկտիվության գիտակցման, ռեֆլեքսիայի ակտերի գործառնություն շնորհիվ, ինչը և հնարավոր է դարձնում մտավոր դեցենտրացիան, անցումը մանկական մտքի ռեալիզմից դեպի օբյեկտիվություն:

Դիտարկված տեսակետները ընդհանուր առմամբ ակնհայտում են այն առանցքային նշանակությունը, որ ծեռք է բերում սեփական Ես-ի պրոգրեսիվ զարգացող գիտակցումը ինտելեկտուալ զարգացման գործում, վերջինս էլ իր հերթին Ես-ի, սեփական սուբյեկտիվության ձևավորման գործում:

Դրանց համադրական վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրակացության, որ *ռեֆլեքսիան կամ ինքնագիտակցությունը հանդես գալիս որպես միավորող օղակ, ինչի գործառնության շնորհիվ միայն սոցիալական ներգործությունների պայմաններում ինտելեկտի ակտիվ մասնակցությամբ ձևավորվում է մարդը որպես բանական արարած, ով գիտակցում է սեփական լինելիությունը և տիրապետում բացառապես մարդուն հատուկ գիտակցական ինքնակարգավորման բարձրագույն ընդունակությանը:*

Այս տեսակետից կարելի է պնդել, որ ոչ թե ինքնագիտակցությունն է ձևավորվում սոցիալական ներգործությունների պայմաններում, ինչպես ավանդաբար ընդունված է կարծել (5,7), այլ անձի սուբյեկտիվությունը, նրա Ես-ը, նրա ինքնությունն է ձևավորվում սոցիալական ներգործությունների պայմաններում ինքնագիտակցության ակտիվ մասնակցությամբ, որը ինտեգրում և Ես-ի տիրապետության առարկա է դարձնում հոգեկան զարգացման առանձին կողմերը:

Այդ գործընթացների ծավալման համար վճռորոշ է դեռահասության տարիքը, երբ վերջնականապես ձևավորում է հասկացական տրամաբանական մտածողություն ու դրա կազմում գործառնող ռեֆլեքսիան, որ մասնավոր դրսևորումներից է անձնային ռեֆլեքսիան կամ ինքնագիտակցությունը:

Դեռահասության տարիքից սկսած վերոհիշյալ գործընթացների ակտիվ ծավալման շնորհիվ անհատը սկզբնապես գերազանցապես հակազդող,

պասսիվ, իռացիոնալ էակից աստիճանաբար վերածվում է առավել պրոակտիվ, գործուն, ռացիոնալ արարածի, ով ինքնագիտակցման օգնությամբ ունակ է իրականացնելու սեփական հոգեկան արտադրանքների ինքնակարգավորում սեփական կամքի ռեալիզացիա, ինքնակատարելագործում և ինքնաիրականացում:

Եվ պատահական չէ, որ հոգեվերլուծությունը այս գործընթացներում վճռորոշ է համարում վաղ մանկական տարիքը, երբ Ս. Լ. Ռուբինշտեյի արտահայտությամբ «... ինքնարտացոլման ակտում աֆֆեկտիվ գործընթացները գերիշխում են ինտելեկտուալ գործընթացների նկատմամբ...» (10, էջ 264), իսկ Լ. Ս. Վիգոտսկին դեռահասությունը, երբ ձեավորվում են հասկացությունների կազմավորման գործառույթը ու տեսական տրամաբանական մտածողությունը (3):

Այս տեսակետից կարծում ենք, որ դեռահասության տարիքում անձի գիտակցական ոլորտի ուսումնասիրությունը բոլոր դեպքերում անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով նրա ինտելլեկտուալ զարգացման առանձնահատկությունները:

Վերջում նշենք, որ Ժ. Պիաժեի հայացքները անհատի Ես-ի, նրա մոտ սուբյեկտության զգացումի ձևավորման, սուբյեկտ–օբյեկտ տարբերակման վերաբերյալ շատ ընդհանուր գծեր ունեն այդ երևույթների հոգեվերլուծական մեկնաբանության հետ, անհատի մոտ Ես ոչ Ես-ի սկզբնական չտարբերակվածության և աստիճանական ձևավորման առումով (6,8,9,11):

Ըստ էության այս երկու տեսակետները, ոչ միայն չեն հակասում միմյանց, այլև փոխլրացնում են իրար, դիտարկելով մարդկային ինքնության, նրա Ես-ի ձևավորման դինամիկան և դրանում առաջատարության առումով հոգեկան զարգացման առանձին կողմերի հերթակայությունը:

Գրականություն

1. Бернс Р. Развитие Я- концепции и воспитание. - М., 1986
2. Божович Л.И. Личность и ее формирование в детском возрасте. - М., 1988
3. Выготский Л.С. Собрание сочинении: В 6 т. - т. 4. - М., 1984
4. Кле М. Психология подростка: (Психосексуальное развитие). - М., 1991
5. Кон И. С. Психилигия ранней юности.- М.,1989.
6. Обухова Л. Ф. Концепция Жана Пиаже: за и против. — М., 1981
7. Обухова Л. Ф. Возрастная Психология. - М., 2004
8. Пиаже Ж. Избранные психологические труды. - М., 1969
9. Психоаналитическая патопсихология. Ред. Ж. Бержере. - М., 2001
10. Рубинштейн С.Л. Основы общей психологии: В 2 т, - М., 1989
11. Фрейд З. Избранное. - М., 1990
12. Хьелл Л., Зиглер Д. Теории личности. — СПБ, 2002. 608 с.
13. Эриксон Э. Идентичность: юность и кризис. - М., 1996